ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/18

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.01.2022թ. թիվ 26/26-1/742-2022 գրությամբ «ՆԱԹՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1.<u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 10.01.2022թ. թիվ 3/27/1470-22 գրության հիման վրա, 17.01.2022թ. թիվ 26/26-1/742-2022 գրությամբ նախաձեռնել է «ՆԱԹՆ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ՆԱԹՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՆԱԹՆ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«ՆԱԹՆ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/18 ընթացակարգի շրջանակներում 26.01.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու), ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.01.2022թ. թիվ 3/27/1470-22 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն, Ձեզ է ուղարկվում ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՁԱՓԱԳՐՈՒՄ/2022/Հ-13 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՆԱԹՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/18 ընթացակարգի շրջանակներում 26.01.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ՆԳ-2022/18 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2022/18 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՁԱՓԱԳՐՈՒՄ/2022/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՆԱԹՆ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ նախորդ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և «ՆԱԹՆ» ՍՊԸ-ին առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն Ընկերության կողմից շտկում չի կատարվել և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի

6-րդ հոդվածի 6-րդ կետի, ՀՀ կառավարության 526-Ն որոշման 45-րդ կետի, ինչպես նաև ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՉԱՓԱԳՐՈՒՄ/2022/Հ-13 ծածկագրով մրցույթի հրավերի 8.9-րդ կետի դրույթների, «ՆԱԹՆ» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման:

3. ՀՀ ոստիկանությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված դրույթով, 10.01.2022թ. թիվ 3/27/1470-22 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմնին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.01.2022թ. թիվ 26/26-1/742-2022 գրությունը, ՀՀ ոստիկանության 10.01.2022թ. թիվ 3/27/1470-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպես, ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՉԱՓԱԳՐՈՒՄ/2022/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՆԱԹՆ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ նախորդ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և «ՆԱԹՆ» ՍՊԸ-ին առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն Ընկերության կողմից շտկում չի կատարվել և ***համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի, ՀՀ կառավարության 526-Ն որոշման 45-րդ կետի, ինչպես նաև ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՉԱՓԱԳՐՈՒՄ/2022/Հ-13 ծածկագրով մրցույթի հրավերի 8.9-րդ կետի դրույթների, «ՆԱԹՆ» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման:***

ՀՀ ոստիկանությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված դրույթով, ***10.01.2022թ. թիվ 3/27/1470-22 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմնին:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է***

մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, հարկ եմ համարում արձանագրել, ***որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրելով այն փաստը, որ Ընկերության կողմից շտկում չի կատարվել, եկել է այն եզրահանգման, որ Ընկերության հայտը ենթակա է մերժման, սակայն առանց Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան «ՆԱԹՆ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ որոշում կայացնելու, 10.01.2022թ. թիվ 3/27/1470-22 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան փաստաթղթերով, ներկայացրել է լիազորված մարմնին՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:***

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «ՆԱԹՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Միևնույն ժամանակ անդրադառնալով Պատվիարտուի կողմից որպես մերժման հիմք վկայակոչված իրավական նորմերին, այն է՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետ, ՀՀ կառավարության 526-Ն որոշման 45-րդ կետ, ՀՀ Ո ԳՀԾՁԲ-

ՉԱՓԱԳՐՈՒՄ/2022/Հ-13 ծածկագրով մրցույթի հրավերի 8.9-րդ կետ, հարկ եմ համարում ընդգծել հետևյալը.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները:

2. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը սահմանում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի կողմից տվյալ մասնակցի տվյալներն ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու պարտավորությունը:

3. Ընթացակարգի հրավերի 8.9-րդ կետը սահմանում է հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ արձանագրվելու դեպքում, հանձնաժողովի կողմից մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնելու և հանձնաժողովի քարտուղարի կողմից նույն օրը դրա մասին համակարգի միջոցով մասնակցին տեղեկացնելու պարտավորությունը:

Այսինքն՝ Պատվիրատուի կողմից, որպես Ընկերության հայտը մերժման ենթակա լինելու հիմք, վկայակոչված իրավական նորմերից որևէ մեկով նախատեսված չեն մասնակցի հայտը մերժելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.01.2022թ. թիվ 26/26-1/742-2022 գրությամբ «ՆԱԹՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**